ները չկրկնվեն:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Հայաստանյայց Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին և գործակցությանը:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Տիրոջ օրհնությամբ սերը, հարգանքը և եղբայրությունն առավել ամրապնդվեն երկու դարավոր բարեկամ ժողովուրդների միջև:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Արտաքին գործերի փոխնախարար Ֆամիանո Կրուչիանելլիին՝ ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Ողջունելով հյուրին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները շարունակաբար զարգանում և ամրապնդվում են: Վեհափառ Հայրապետը հանուն հայ ժողովրդի շնորհակալություն հայտնեց Իտալիայի իշխանություններին և ժողովրդին այն զորակցության համար, որ ցուցաբերվում է տարածաշրջանում խաղաղությունն ամրապնդելու գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վատիկանի միջև առկա հարաբերությունները և սերտ համագործակցությունը, ինչի շնորհիվ չորս երիտասարդ միաբաններ ներկայիս ուսանում են Կաթոլիկ Եկեղեցու տարբեր կրթական հաստատություններում:

Հանդիպման ընթացքում նաև անդրադարձ եղավ ժողովրդի սոցիալական վիճակին, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՉԻՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական ժողովի փոխնախագահ Սյու Ցզյալուի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ-ում ՉԺՀ դեսպան Ցզո Սյուելյանի ուղեկցությամբ:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայաստանի և Չինաստանի միջև տարեցտարի ամրացող և սերտացող հարաբերությունների համար՝ նկատելով, որ դրանց արմատները ձգվում են մինչև վաղ միջնադար: Վեհափառը վստահություն հայտնեց, որ այդ հարաբերությունների զորացումը երկուստեք շահեկան է լինելու: